

կիոյ Ազարիա կաթողիկոսին տուած պատասխանէն (տե՛ս, Պալճեան, Պարմալէնէն Կաթող. Ժամագր. էջ 302-313) եւ Հոռմի Հայ գաղութին գլխաւորներուն (Հայոց տան վերակացու Սուլթանչահի, Յովհաննէս Տէրզնցիի, Հայոց ժամարար Տ. Թաղէոսի, Խաչատուրի, Գրիգոր եպս.ի եւ այլն) Երուսաղէմի Դաւիթ պատրիարքին ուղղած գիրէն (տե՛ս, Հ. Ղևոնդ Ալիշան, Հայաստան, Գ. էջ 291-301) կը հասկըցուի թէ մտադրուած էր Հոռմի մէջ կազմել մեծ ժողով մը Պապին նախագահութեան տակ:

Դաւիթ պատրիարքի ուղղուած 1583 Յունվար 17 թուակիր նամակին մէջ կ'ըսուի թէ «Բագում հրաւիրակս առաքեալ եմ ընդ ասեմայն տեղիս քիստնեից, ի յԵրովպիս, յԱրաբիս, ի Սուրիս, ի Վիրս, ի Հայս, ի յԱսորիս, ի Միջագետս, ի խոնարհս Պաղեստինայս, ի յՈռորսն, եւ յաւեմայն ի իսաչապաշս, ի պատրիարքս եւ յեպիսկոպոսունս, շէ քայլեն ասո լաւն նոր իմն իրն շոր սորքն քաղն Կաթողի»:

Այս գրոյն Դաւիթ պատրիարքի (1571-1613) տուած պատասխանը յայտնի չէ: Սակայն Ազարիա Սսոյ կաթողիկոսին պատասխանը Գրիգոր ԺԳ. պապին երեք առաջարկներուն, Ա. Հոռմի հնազանդութեան,